

եթէ ստոյլ համարինք Գ. Յովսէփեանի հաստատածը¹:

Ծննդավայրը Սասուն կը համարուի² եւ երկար ժամանակ Արճիշ անաթոք ըլլալուն համար՝ կոչուած է Արճիշեցի:

Մանկութեան եւ երիտասարդութեան տարիները ո՞ր եւ ի՞նչպէս անցուցած ըլլալու մասին տեղեակ չենք: Այսչափ միայն գիտենք, որ եղած է աշակերտ Ներսէս Մշեցիին († 1284ին) Գլաճորի վանքին մէջ, հաւանաբար քսան տարեկան հասակին:

Գլաճորի վանքը դացած ըլլալու է անշուշտ իր բարեկամին՝ Մխիթար Սասնեցիի օրինակին հետեւելով, որովհետեւ այս ուսումնաստենչ եւ հոգեւէր պատանին, զոր Յայմաուրբէնը սուրբերու կարգի կը յիշեն³, հազիւ քահանայ ձեռնադրուած, « եռայր հոգի նորա ի նմա - կը գրէ կենսագիրը, Մկրտիչ անունով մէկը⁴, - եւ խնդրէր ուսուցիչ եւ վարդապետ, զի վարժեսցի նոքօք, զի յայնմ ժամանակի ոչ զոյր վարդապետ յերկրին Քաջբերունեաց: Եւ նա վասն տղայական հասակին եւ անկատար գոյոյն՝ պատկառէր եւս ուրեք երթալ զի դեռեւս մօրուք ոչ եւս էին բուսեալ յերեսս նորա: Եւ քաջալերեալ յուսումնակցաց իւրոց՝ որոց անուանքն Ստեփաննոս եւ Յովհաննէս կոչեցեալ, զորս եւ յիշէ ի սոյն մատենի, եւ առաջնորդ առեալ զՀոգին սուրբ, զընայր յԱյրարատեան դաւառ ի գերագահ սուրբ ամենայն Հայոց՝ ի մայրն հաւատոյ, յորում գլուխն ամենայն եկեղեցեաց Հայկազանց... եւ անդ ողջունեալ սուրբ տեղեացն եւ անտի գնացեալ ի դաւառն կոչեցեալ Վայոց ձոր, ի վանսն, որ այժմ կոչի Գլաճոր, առ գերակատար եւ սուրբ վարդապետ Ներսէս եւ կացեալ անդ ընդ նմա ամս երեք »:

Ապա Արճիշեցի Յովհաննէս քաջալերչներէն մին կ'ըլլայ Սասնեցի Մխիթար քահանային, որուն քով կ'երթայ շատ ժամանակ չանցած:

« Յայնժամ - կը կցէ կենսագիրը⁵ - զան հասանն անդ ուսումնակիցք սորա, զորս վերադոյն ասացաք: Յայնժամ երանելիս Մխիթար յոյժ ուրախ եղեւ ի դալ ընկերաց իւրոց եւ լինել նմա օղնական եւ ըծակից յամենայն զործս բարութեան եւ հարցաքննութիւնս Աստուածաշունչ մատենիս »:

Բացի այս քանի մը տողերու հակիրճ տեղեկութիւններէն՝ ունինք զեռ քանի մը տողեր Յայմաուրբէնէն, ուրիշ կրնանք ընդարձակապէս տեղեկութիւններ քաղել Յովհաննէս Արճիշեցիի կեանքի մասին: Կարեւոր տեղեկութեան մը կը հանդիպինք Մխիթար Սասնեցիի կենսագրութեան մէջ՝ այսպէս. « Եւ յետ մեռանելոյ մօրն՝ զնաց Մխիթարն յարեւելս եւ ընակեցաւ ի սուրբ ուխտն Գլաճորոյ, առ մեծ վարդապետն Ներսէս: Եւ վարժեալ ի նմանէ Հին եւ Նոր Կտակարանօք յաստուածային զրոց՝ ունելով ուսումնակից իւր զմեծն Եսայի որ էր ի Նիշ գաւառէն Սասնոյ՝ եւ զՅովհաննէս Արճիշեցին՝ որոյ անունն ոսպընկեր կոչեցաւ վասն զի զամս ժի ի հացէ եկաց, եւ թըրջեալ ոսպնով շատացաւ »⁶:

Այս տեղեկութիւններուն համաձայն, Յովհաննէս Արճիշեցին աշակերտած է այս մեծանուն Ներսէս Մշեցի վարդապետին, որ 1284ին կնքած ըլլալու է իր մահկանացուն: Հետեւաբար ստոյլ համարելով ծննդեան թուականը 1260 տարին՝ Յովհաննէս Արճիշեցի քսան տարեկան հասակին կ'աւարտէ իր ուսանողութեան առաջին շրջանը, զոր կը շարունակէ իր

աւագ դասընկերոջ՝ Եսայի Նշեցիին առաջնորդութեան տակ:

Ամէն պարագայի, Արճիշեցին բարեբախտութիւն ունեցեր է իր ուսումը բոլորելու Գլաճորի վանքին մէջ, որ նոյն դարուն կարկառուն կեդրոններէն մէկն էր եւ ամէն տեսակ դիտութիւններու զըլլաւոր կեդրոնը նկատուած: Վանքին կառուցման թուականը ԺԲ. դարուն երկրորդ կէտին կը համարուի, եւ մինչեւ ԺԴ. դար բարգաւաճումով պայծառացած էր: Ուստի արժանացած է շատ մը դրուատումներու՝ ժամանակակիցներէն. « Երկրորդ Աթէնք... մայրաքաղաք ամենայն իմաստից... համալսարան »: Եւ իրապէս անուանի անձեր արտադրած է այդ վանքը, ինչպիսի են, բացի մեզի ծանօթ Մխիթար Սասնեցի եւ Յովհաննէս Արճիշեցի վարդապետներէն, Եսայի Նշեցիին իր 363 աշակերտներով, ինչպէս Տերատուր վարդապետ, Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր մեռելայարոյց, Յովհաննէս Երզնկացի, Խաչատուր Կեչառեցի եւ այլն: Այդ վարդապետները եղան որ յետոյ նախանձախնդիր պահպաններ կանգնեցան հայկական աւանդութեան ընդդէմ նորամուտ եւ օտար հոսանքներու:

Գլաճորի վանքին մէջ աւանդուած ուսումը վերածուած եւ կեդրոնացած էր « ի հարցաքննութիւն Աստուածաշունչ մատենից », ուստի կը սորվեցնէին « զՀին եւ զՆոր Կտակարանս եւ յոյժ հմուտ եղեալ փիլիսոփայական արհեստից » կը հեռանային մենաստանի շրջափակներէն⁷:

Մխիթար Սասնեցի քանի մը հետաքրքրական տողեր թողուցած է իր Է. ճառին մէջ, ուր աղնարկներ կը գտնենք Յովհաննէս Արճիշեցիի մասին եւ նոյնիսկ կրնանք տեղեկանալ թէ Յովհաննէս Արճիշեցի ինչպէս կը խորհէր ծիսական փափուկ նիւթի մը մասին եւս: Ճառիս վեր-

նագիրն է « Առ այնոսիկ, որ խմոր եւ ջուր արկանեն յահաւոր խորհուրդ սրբոյ պատարագին »: Նոյն հռչակաւոր վանքին մէջ պատահած կը համարուի հետեւեալը. « Յաւուրսն յայնոսիկ, յորս էաք առ վարդապետին մերոյ ընտրելոյ յուսումն հոգեւորական յաստուածաշունչ մատենից, որոյ անուն Եսայի անուանիւր: Եւ յաւուր միում ընդ եղբորս իմում հաւատարմի եւ ուսումնակցի՝ անուն Յովհաննէս կոչեցելոյ՝ այսպիսի խնդիր եղեւ ի միջի երկուցս, առ մարմնաւոր սեղանին նստելով՝ վասն խառնման ջրոյ ի բաժակն տէրունական: Քանզի ասէր նա, թէ որք արկանեն ջուր ի բաժակ արեան Տեառն, եթէ յԱսորոց եւ թէ յայլոց ազգաց իցեն, ընդ բամբասանօք են այսպիսիքն եւ այն նոցա ի մեղս համարեալ: Իսկ ես հակառակէի ընդդէմ դնելով նմա, եթէ աւանդութիւն է նոցա այն, ըստ նախնեացն սովորութեան, զոր առեալ ունին եւ ոչ են ընդ բամբասանօք մեղանաց: Այլ թէ մեք խոնարհիմք ի կրօնս նոցա, ջուր արկանել ի բաժակ արեան Տեառն, ընդ բամբասանօք եմք այնուհետեւ եւ ընդ մեղադրանօք, զի ոչ է ըստ աւանդից սրբոց հարցն մերոց, զոր առեալ ունիմք առ ի նոցանէ »⁸:

Ապա կը շարունակէ պատմութիւնը, թէ ինքը Մխիթար տեսիլք մը կ'ունենայ, որուն մէջ իրաւունք կը տրուի իր ուսումնակից ընկերոջ:

Այսպէս կամ այնպէս, քիչ մը մշուշ պատած է ներկայացուած բանավէճին նիւթին եւ ծաղրերուն վրայ. բայց յայտնի կարելի է իմանալ երկուքին հոգեկան մտերմութիւնը զոր մանկութենէ մինչեւ վերջը փոխադարձ պահեր են իրարու հետ. հաւանական կրնանք համարիլ նաեւ, որ նախ քան իրենց երկիրները վերադառնալը, Սասուն եւ Արճիշ, միասին առած ըլլան վարդապետական դաւադանն

1. Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, 1260? - 1337, Վաղարշապատ, 1899, էջ 6-7: Հ. Հ. Ոսկեան, Ազգ. Մատ. ճԾԱ, էջ 425:
2. Հմմ. Հ. Մ. Զամբեան, Պատմութիւն Հայոց, Գ. էջ 274:

3. Յայմաուրբէ, տպ. Մարտիրոսեան, 1720, էջ 364:

4. Գ. Յովսէփեան, անդ, էջ 28-29:

5. Անդ, էջ 29:

6. Յայմաուրբէ, անդ, էջ 365:

7. Գ. Յովսէփեան, անդ, էջ 13:

8. Անդ, էջ 11-12:



ալ, 1291ին, Եսայի Նչեցիէն⁹, տաս տարուան ուսումնական դասընթացը աւարտելէն ետքը¹⁰:

Մխիթար Սասնեցի խոստովիլ ուղած է վարդապետական աստիճան առնելէ, բայց վերջապէս ընդունել է, կրկին անգամ վերադառնալով Գլաճորի վանքը: Այսպիսի դէպքերու տեղեակ չենք Յովհաննէսի մասին: Ան ալ չենք գիտեր որ իր ընկերով նման չըջաղայած ըլլայ այլեւայլ տեղեր՝ Կերմանից եւ Մեծոփայ եւ այլ վանքերը: այնքան դիտենք միայն որ խաղաղօրէն Արճիշի - Մեծոփայ - վանքը քաշուած ըլլայ, առանց շատ երթեւեկութեան:

Այսու կը տեսնուի նաեւ երկու այնքան սերունդ հոգեկիցներու միջեւ եղած նկարագիրներու մեծ տարբերութիւնը:

Մխիթար Սասնեցին կ'երեւի մեզի վաւերութիւն եւ հրաբորբոր բնավորութեամբ եւ խառնուածքով մէկը: Կենսադիրներէն մին, Դանիէլ, կ'աւանդէ. « եւ չըջալ ի վանորայն Արճիշոյ եւ կեցեալ յամենայն տեղիս տարւով եւ կէս տարւով եւ ամսով, եւ դամենեսեան լուսաւորէր բարի ձեւով, ուղղակի կարգաւ եւ ուղղամիտ խրատով »: Ունեցեր է քարոզական եւ ուսնողուն դործունէութիւն եւ մեծ ազդեցութիւն բարի ժողովուրդին վրայ, որ շատ սիրած ու յարգած է անոր բարեգործութեամբ լի կեանքը, եւ մինչեւ իսկ սուրբի համբաւ չնորհած է անոր:

9. Նշանաւոր էին - կը գրէ Հ. Ղ. Ալիշան - աստ ի Գլաճոր միւս Մխիթար նախաշնորհաւոր (յէջ 131) Սասնեցի կամ Կերմանեցի... ընդ ուսումնական իւրոյ եւ սիրելոյ Յովհաննէս Արճիշեցոյ Ոսպնակեր կոչեցելոյ: որոց առեալ զգաւազան վարդապետութեան յետագայ՝ դարձան յերկիր իւրեանց եւ ի վանս Մեծոփայ» (Սիսական, էջ 136): Եսայի Նչեցի (1284-1338) շուրջ 363 աշակերտ ունեցեր է, որոնցմէ կը յիշուին Յովհաննէս Արճիշեցի, Մխիթար Սասնեցի, Տիրատուր վարդապետ, Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր Մեծոփայոց, Յովհաննէս Երզնկա-

Ընդհակառակն, Յովհաննէս Արճիշեցի չէ ունեցած այսքան արտաքին դործունէութիւն, որքան որ տեղեկութիւններ չեն հասած մեզի, անշուշտ իր մեղմիկ բնավորութեան եւ հանդարտ, խոհական խառնուածքին շնորհիւ: Վայլած չէ ժողովրդական խանդավառ ցոյցերը, այլ քաշուած իր հոգւոյն խորը՝ ճաշակած ըլլալու է աստուածային հոգեկան մխիթարութիւններու առատութիւնը: Եղած է ճշմարտուն անձ մը եւ 17 տարի թրջած ոսպով բաւականացած եւ հասած է բարձր սրբութեան:

Կեանքին վերջին տարիները անցուցած է Արճիշի դաշտին հիւսիսային կողմը կառուցուած Մեծոփայ հոգեւանք վանքին մէջ¹¹: Միեւնոյն վանքին մէջ ապրած եւ թաղուած են Մխիթար Սասնեցին¹² եւ Թովմաս Մեծոփեցին, անոր եղբայրը՝ Պողոս Եպիսկոպոս, եւ Ստեփան անունով նահատակ մը¹³: Զարմանալի է որ հոն թաղուած չէ մեր վարդապետն ալ, այլ վանքէն դուրս, վանքին հարակից կողմը գտնուած Յարութիւն դիւղին մէջ: Մանաւոր թէ դիւղին դիմացի բլրան վրայի մատրան մը մէջ ամփոփուած են իր նշխարները, եւ այս արձանագրութիւնը կարտապանին վրայ: Այս է յարկ տալանի Յովհաննէս վարդապետի. ի քու. ԶԶԶ (= 1327):

Այս հակիրճ տողերն ունինք իրր միակ արձանագրութիւն եւ յիշատակ Յ. Արճի-

ցի, Սաշատուր Կեչառեցի եւն.: Հմմտ. Հ. Աճառեան, Անճն. Բառ. Հատոր Բ. էջ 128: 10. Գ. Յովսէփեան, անդ, էջ 12: Սիսական, էջ 136: 11. Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն, էջ 269: Հմմ. Հ. Հ. Ոսկեան, Ազգ. Մատ. ձմԱ, էջ 425, եւ ձմԵ, էջ 1063, 1065, 1066: 12. Հ. Հ. Ոսկեան, անդ, ձմԱ, էջ 425: Մ. Սասնեցիի մահուան թուականը ամէն հեղինակ 1337ին կը դնէ: Գ. Յովսէփեան, անդ, էջ 26, 32: Հ. Հ. Ոսկեան, ձմԵ, էջ 1063: Աճառեան, Անճ. Բառ. հտոր. Գ. էջ 381: 13. Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն, էջ 269:

չեցի կեանքին եւ մահուան թուականի մասին¹⁴:

Ամփոփելով իր կեանքին զլիսաւոր թուականները՝ պիտի ըսենք. Մահուան թուականը զնելով 1327 տարին, եւ անկէ 67 տարի պակսեցնելով, իրր ապրած տարիներ, կը հասնինք 1260 թուականին, որ ծննդեան թուականը կարելի է համարել: Ուրիշ երկու թուականներ ալ կրնանք իրր ստոյգ համարել՝ առաջինը 1281, աշակերտութեան առաջին տարին - քսան տարեկան հասակին - եւ ապա 1291 թուականը՝ վարդապետական աստիճան առնելու տարին - երեսուն տարեկան հասակին:

ԳՈՐԾՆԵՐԸ

Բացի Ս. Պատարագի մեկնութենէն, ուրիշ վաւերական գործերու մասին տեղեկութիւն չունինք, որոնց հեղինակն ըլլայ Յ. Արճիշեցին:

Անհարազատ ըլլալու են Հ. Ղ. Ալիշանի յիշած գործերը¹⁵. « Իր ծանօթ գործն է - կը գրէ Հայապատումին մէջ - Պատարագի Մեկնութիւն մի, իրմէ առջի գրողներէն քաղած, եւ յատկապէս ի Համբրոնացոյն: Քանի մ'այլ մանր մեկնողական բանք, բայց տարակուսական են իրեն ըլլալուն. զորս յիշելով յետին դարու գրիչ մի՛ կ'աւելցնէ եւ զ«Պատմագիրն եւս»: Հետաքրքրութիւն չարժէ յիշատակը, բայց չգիտեմք ինչ ըլլալն: Նոյնպէս չգիտեմք ի՞նչ Պատմութիւն է, Պարսից, զոր ի ԺԴ դարու Յովհաննէս վարդապետ մի թարգմաներ է, ինչպէս կ'ըսէ անցեալ (ԺԹ) դարու կէսէն առաջ գրող Եւրոպա-

ցի մի (Շորէն), եւ կարծեմք թէ Արճիշեցին ըլլայ »:

Աւելորդ է ուրեմն պարտումներ կատարել իր այլ եւ այլ գործերու մասին, որոնց հեղինակութիւնը ուրիշ Յովհաննէսներու ընծայելի են գուցէ, եւ արդէն իսկ բաւական է իր Մեկնութիւնը՝ մեզի ցոյց տալու հմուտ եւ քաջակրօնով մտքի տէր անձ մը ըլլալը, եւ այդ նոյն դործը բաւարար է Յովհաննէս Արճիշեցիին յիշատակը անմահացնելու:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՅԻ
ՊԱՏԱՐԱԳԱՆ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Անդրադարձման եւ ուշադրութեան կէտ մըն է Յովհաննէս Արճիշեցիի գրաւած գիրքը հայ եկեղեցւոյ վարդապետներու շրջանին մէջ, որուն ան վերջին օղակը կը կազմէ: Իրմով է որ կը վերջանայ հայ եկեղեցւոյ աւանդապահ շարքը, որոնք սկիզբէն ի վեր, առանց պայքարներ մղելու, առանց ջատագովութեան, բանավեճերու, առանց խռովութեան, կրցած են աւանդել ու պահել վարդապետական ճշմարտութիւնները, դաւանանքը, հաւատքն ու սէրը:

Իրապէս հակապատկեր ըլլալ թուեցաւ անիկա իր ընկերակցին՝ Մխիթար Սասնեցիին, որ պարագաներու բերումով, ստիպուել էր հրապարակ իջնելու Միաբանող Եղբայրներու գէմ, եւ այսպէսով պարագլուխն ըլլալու նոր դարաշրջանի մը վարդապետներուն, որոնք վտանգուած տեսնելով հայ եկեղեցւոյ դարաւոր աւանդը, աւելի մաքաւողի, ինքնապաշտպանումի դեր ստանձնելով, քիչ մը հե-

կը համարի Հ. Ն. Սարգիսեանի մէկ կարծիքը: Սակայն ինքն ալ չի կրնար ստույգագոյն թուական մը հաստատել Արճիշեցիի մահուան, ուստի ազատ ենք 1327 տարին նշելու որպէս մահուան թուական: 15. Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, 1901, Ա., էջ 298:

ուսացած են նախորդ դարերում վարդապետներում հանդարտիկ ոճին:

Մխիթար Գոչին մինչև Յովհաննէս Արճիշեցի իրարու աշակերտած եւ յաջորդած են ծանօթ վարդապետներ, ինչպէս Վանական վարդապետ, Վարդան Բարձրբերդցի, Ներսէս Տարօնեցի, Եսայի Նշեցի. հուսկ Յովհաննէս Արճիշեցին:

Պատարագի Մեկնութիւնը հետեւաբար կրկին կարեւորութիւն կը ստանայ, որովհետեւ կ'ուզէ իր մէջ ամփոփել, եւ արդարեւ կ'ամփոփէ, նախորդ դարերու եկեղեցական վարդապետութիւնը: Դիւրաւ կարելի է գտնել անոր մէջ, բացի Պատարագի խորհուրդին բացատրութենէն, հաւատքի ճամբարութիւններու ամփոփոյթն ալ, ինչ որ սակայն մեր ուսումնասիրութեան նիւթ պիտի չկազմէ:

ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայ մեր ուսումնասիրութեան ծառայեց 1830ին կալկաթա տպուած օրինակը, որ 1799ի Պոլսոյ հրատարակութեան մէկ արտատպումն է. առաջին տրպարութիւնը եղած է Պոլիս, 1717ին¹⁶: Գիրքը ունի հետեւեալ խորագիրը.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՀԱՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Արտահանել ի մեկնութեանց խորովու Անգեւացեաց Եպիսկոպոսի եւ Ներսեսի Լամբրոնացոյ՝ վերատեսչին Տարտմի կարնելով եւ պարգաբանելով

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՃԻՇԵՑԻՈՅ:

Ի լոյս բնծայեաց Պարոն Յովհաննէս Ավդալեանց, Անգամ Ասիական Միաբա-

նութեանն Բանգալայ, եւ դասասաց ի Մարդասիրական ձեմարանին:

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Եփրեմայ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ի գործարանի նորին իսկ ձեմարանին

Այս տողերը բաւականաչափ կ'իմացնեն թէ ինչ եղած է Արճիշեցիի ընդհանուր նպատակը. ուզած է համառօտ «կարճելով եւ պարզարանելով» ներկայացնել խորով Սնձեւացիի եւ Ներսէս Լարմրոնացիի մեկնութիւնները¹⁷:

Աւելի մանրամասնօրէն կը պարզէ իր միտքը եւ նպատակը, Յառաջարանին մէջ, տալով գործին վերջին պատճառները:

Նախկին վարդապետները, կ'ըսէ, իրենց գրելու եւ խօսելու միջոց, «նուրբ եւ առակաւոր դարձուածովք»¹⁸ կը ջանային ունկնդիրներուն¹⁹ բացատրել աստուածային պատգամները: Այն ժամանակները, կը խորհրդածէ, ունկնդիրները վարժ էին եւ դիւրաւ կը հասկնային ամէն տեսակ նուրբ իմաստներ, եւ մանաւանդ կարծես կը պահանջէին ալ վարդապետներէն. ուստի անոնք չարհամարհուելու համար՝ նոյն նրբութիւններով կը խօսէին ու կը գրէին: Բայց Արճիշեցիի ժամանակակից մարդիկը այլեւս փոխուել էին. չունէին առաջուաններուն փոյթը, կարգալու փափաքը՝ նման դժուարիմաց բաներ. կամ եթէ նոյնիսկ կարդային՝ խորը չէին թափանցեր:

Յար եւ նման տղիտութիւն կը տիրէր նաեւ քահանաներու դասակարգին մէջ ալ: Եւ այս պարագան աւելի ծանր ըլլալով՝ ուզած է օգտակար ըլլալ անոնց, բացատրութիւն տալով պատարագի բոլոր մանրամասնութիւններուն: Թէեւ, կը կրէ

յառաջարանին. վերջաւորութեան վրայ, «Մեծն Խոսրով» Հայրն Գրիգորի Նարեկացւոյն նախ՝ եւ Ներսէս Վերատեսուչն Տարսնի յետոյ՝ ընդարձակ եւ պայծառ քննութեամբ հոռու մեզ զմեկնութիւն պատարագիս: Բայց եւ ոմանք՝ զի զյաճախութիւն բանիցն պատճառեն, եւ կէսք զնրբութիւնն, եւ անօգուտ մնան. թէպէտ եւ չէ ինչ ծածուկ բանք նոյնի: Յաղապարտիկ յետնեալս ի բարեաց՝ ծնունդս վերջին ժամանակիս՝ Ովհաննէս Արճիշեցի թախանձեալ յոմանց քահանայից սրբազնեցից, տալ նոցա վերստին համառօտ եւ պարզ բանիւք զտեսութիւն խորհրդոյս»:

Նպատակին դրական կողմը այսպէս սահմանադէլով, իսկոյն բացասական կողմն ալ ցոյց կու տայ անմիջապէս աւելցնելով.

«Ոչ թէ յաւելուած ինչ իմաստից խառնելով ի մէջ ի բանս մեկնութեան նախասացեալ արանցն, այլ միայն դրանս նոցունց կարճեալ՝ պարզեցաք»:

ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՁԵՆՈՒԳԻՐՆԵՐԸ²⁰

Ս. Ղազարու Ձեռագրատան մէջ կը պահուին Յովհաննէս Արճիշեցիի Պատարագի Մեկնութեան վեց ձեռագիրներ, բաւական լաւ վիճակի մէջ, իրարու նման ծաւալով. Մեկնութեան հետ միացած են ուրիշ բնագիրներ ալ:

1. – Առաջին ձեռագիրը կը կրէ թիւ 735. մեծութիւն՝ 16×11. հաստութիւն՝ 3,5. 250 էջ ունի: Յ. Արճիշեցիին գրութիւնը առաջին էջէն մինչեւ կէսը կը հասնի: Գրութեան ձեւը նօտրագիր է. ժա-

մանակը քիչ մը ուշ է՝ 1715. տեղը անորոշ է. Մեկնութեան վերջաւորութեան՝ այսպիսի բան մը գրուած կայ. «Գրեցաւ զիրս ի թվում անթանազին ՌՃԿԴ (= 1715) ի գիւղաքաղաքիս Կէօղլուէի (?) . յունիսի ը. օրն Դչի աւարտեցաւ ամէն»:

Մեկնութեան ետեւ կայ «Առէֆ կեւրայֆ»ի համառօտ մեկնութիւն մը. ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՅ, աւելի ծաւալուն թարգմանութիւն մը, Լէօպոլիս կատարուած. յետոյ կայ քրիստոնէական վարդապետութեան համառօտ գրքոյկ մը. եւ հուսկ փոքրիկ անկապ անկապ գրութիւններ:

Այս ձեռագիրը Կ գրով պիտի նշանակեմ ուսումնասիրութեանս մէջ, քանի որ Կէօղլուէի մէջ օրինակուած է: Ս. Ղազար հասած է 1877ին:

Խրատագիրներու նկատմամբ, բաւական հաւատարիմ օրինակ մըն է տպագրութեան հետ, իսկապէս մօտէն կը հետեւի եւ շեղելու պարագաներուն՝ աւելի յաւելումներ կը կցէ, որոնք շատ անգամ ուրիշ բաներ չեն՝ եթէ ոչ պարզապէս կըրկնութիւններ՝ նոր մէջըրեւում խօսքերուն:

Գրքին հեղինակութիւնը Յ. Արճիշեցիին չի տար, այլ Յ. Երզնկացիին, ինչպէս քիչ վար պիտի տեսնենք:

2. – Երկրորդ ձեռագիրը 1537 թիւը կը կրէ: Ծաւալով աւելի մեծ է՝ 20×15,4: Թերթերը՝ աւելի նուրբ եւ աւելի խեղճ թուղթով՝ էջ 186: Այս ձեռագիրն ալ նօտրագիր եւ նուազ խնամքով օրինակուած է:

Օրինակութեան ժամանակը հին ըլլալ կը թուի՝ 1698ին. օրինակողը կը խոստովանի «Գրեցաւ Մեկնութիւն Սուրբ Պա-

16. Ուրիշ տպագրութիւն մըն ալ գոյութիւն ունի, էջմիածին, 1860, որուն հետեւած է փառէն Եպիսկոպոս, իր ուսումնասիրութեան ընթացքին. Բաղդատական պատկեր Հայկ. չորս պատարագամատոյցներու. «Հասկ», ԺԹ. տարի (1950), թիւ 4, 5:

17. Ձեռագրական տարբերակները քիչ մը ստորեւ կու տանք:

18. Այս բացատրութիւնը բոլոր ձեռագիրներէն մէջ նոյն է:

19. Հոս ձեռագրական տարբերութիւններ կան:

20. Ս. Ղազարի ձեռագրատան օրինակէն դատ, 1) Վիեննա կը գտնուին Երկու ձեռագիրներ, զոր 174 եւ 466 թիւերով ցուցակագրած է Տաշեան (էջ 490 եւ 941): 2) Փարիզ կը գտնուի ուրիշ օրինակ մը (Գաթըֆ. Պ. Հայոց, էջ 511-512):

3) Հալէպ մէկ հատ. (տես Յուդակ հայերէն ձեռագրաց, թիւ 127):

4) Էջմիածին չորս հատ կար, ըստ 1863 տարուան Մայր Ցուցակի. թիւ 1421 (1656ի օրինակ), թիւ 1422, 1423 (1641ի օրինակ) եւ թիւ 1424 (1613ի օրինակ):

տարազին ի թուականին հայկական տու-
մարիս ՌՃԽԷ (== 1698)՝ ձեռամբ տար-
տամեալ եւ տխեղձ մատին որ մական-
ուամբ Բուլկանց Տէր Թումայ, բանի
խնդրողի ի սուրբ եկեղեցւոյն սուրբն Պո-
ղոս առաքելոյն յերկրին վանք»:

Յ. Արճիշեցիի Պատարագի մեկնու-
թիւնը այս ձեռագրի օրինակին մէջ ալ
առաջին տեղը կը դրաւ եւ մինչեւ 42
թերթը կը հասնի. ապա այլ եւ այլ նիւ-
թեր կը յաջորդեն այս կարգով. Վարդա-
նայ վարդապետի ազօթք. Խորհրդածու-
թիւնք ի վերայ ժր Մարգարէից. Յաղագս
կազմութեան մարդոյ. Յաղագս հոգմոց.
Տեղացոյց Երուսաղէմ քաղաքի. Վարդ
առաքելոց. Պատմութիւն Աղամայ եւ
նախնի մարդկանն խնդրելիք, յորում եւ
անհամեմատ դեղ Քրիստոսի. Կարգաւո-
րութիւն ցուցման օրհնութեանքեր ցու-
ցակիս. Աշխարհացոյց. Շինիչք քաղա-
քաց. Գետք մեծամեծք եւ բղխունք նո-
ցա. Անուանք քաղաքաց հնդկաց եւ պար-
սից. Եպիփանու յաղագս ականց. Մխի-
թարայ բժշկի, վասն քարանց եւ յատկու-
թեանց նոցա. Յապուստտ իմաստասիրի
բան յաղագս Սեւեկեանց. Աշակերտք
Սահակայ եւ Մեսրոպայ ո՞րք. Յաղագս
Արիստոտելի. Գրիգորիսի կաթողիկոսի
բանք պիտանիք. յԱզաթանդեղայ պատ-
մութենէն վասն վանօրէիցն որ ի սուրբ
քաղաքն Երուսաղէմ. Վասն խաչին Քրիս-
տոսի. Յաղագս սրբոյ խաչին գերութեան
եւ դարձի. Յակոբայ Դրիմեցւոյ, Մեկ-
նութիւն տումարի:

Ձեռագրիս Վ. նշանագիրը կու տամ,
վանի մէջ օրինակուած բլրալուն համար:
Ս. Ղազար բերուած է 1844ին, Կ. Պոլսէն.
անկէ առաջ Ախալցխա կը գտնուէր:

Թէեւ Պատարագի Մեկնութեան յառա-
ջաբանին մէջ Կ ձեռագրին հետ միասին
յաւելումներ կը դնեն, բայց յաջորդ մա-
սերուն մէջ աւելի ուստոստուն կը հետեւի
տպագրին, շատ անգամ չի նշանակեր
խրատագիրները եւ նոյնիսկ ազօթքներու
մեկնութիւններն ալ կիսատ կը թողու:

Խորագիրներու ուղղակի ուսումնասիրու-
թեանը համար՝ դիմելու չենք այս օրի-
նակին, բայց նկատելի է որ թողուցած
կտորները օրինակողին կողմէն լուկ կա-
մայական են:

3. - Երրորդ ձեռագիրը, քիչ թէ շատ
այս երկու նախապէս յիշուած ձեռագիր-
ներուն կը հետեւի, բայց միանգամայն
կարեւոր տարբերակներով լի: Ունի 1533
թիւը, եւ աւելի ծաւալուն. մեծութիւն՝
20×15,5, լայնք՝ 5 հղղղմ:

Բովանդակած նիւթերուն պէս՝ զանա-
զանեալ է դրութեան ձեւը. Մեկնութիւնը
նոտրագիր է եւ հատորին վերջին քառորդ
մասը բռնած է: Նախորդ դրութիւնը որ
խորհրդատուոր մըն է, հաւասարապէս
նոտրագիր է, բայց աւելի խնամքով օրի-
նակուած: Ներսէս Շնորհալիին Ընդհան-
րական թուղթը բոլորգիր է: Մնացած կը-
տոր կտոր հատուածները նոտրագիր են:
Վարդան վարդապետի՝ խրատական
բանք, Աթանաս հայրապետի՝ հարց-
մունք, Ս. Եփրեմի՝ խրատք կրօնաւո-
րաց, քահանայից, Քարող ննջեցելոց,
խրատական եւ բարոյական բանք ինչ եւ
խնդիրք:

Օրինակութեան ժամանակը անորոշ է.
իրը յիշատակարան քանի մը տողեր ա-
ւելցուած են վերջնութեթ թերթին վարի
մասին վրայ, եւ չկայ թուականի մը յի-
շատակութիւնը: Օրինակողն է Ղազար
Երէց:

«Ով եղբայր ընթերցող այս որ մնա-
ցածն(?) այս որ առաջն գիւտ(?) կար-
դայ, մի՛ մեղադրէք, տեղ չի կար գրե-
լու: Խորհրդին մեկնիչին մնացորդ է այս
ի հետն կարդաս, ո՞վ քահանայք, մի՛ մե-
ղադրէք. կէսմն կապելուն յետեւ գրեցի
որ աւրինակն յետոյ ձեռք եկօ»: Ապա ե-
րեք դժերու մէջ առած՝ «յիշեալ անարժան
Ղազար էրէց»:

Վ. նշանագրով պիտի յիշեմ այս ձեռա-
գիրը: Թուականի մը կը հանդիպինք վեր-
ջին թերթին վրայ. թվին ՌՃԼԸին: Այս-
պէսով կարելի է 1689ին օրինակուած հա-

մարիլ, մինչեւ այսօր անծանօթ տեղ մը:
Հնազոյն օրինակը նկատելու ենք այս ե-
րեք ձեռագիրներուն մէջ, բայց ափսոս
որ օրինակողը տուած չէ ժամանակի եւ
տեղւոյ կարեւոր ճշտութիւններ, որ ա-
ւելի արժէք կարենայինք տալ ձեռագրին:
Թէեւ լեզուական տեսակէտով ինչ ինչ
պարբերութիւններու մէջ, կը գերազանցէ
նախորդներուն լեզուն, բայց ուրիշ կը-
տորներու մէջ օրինակողին անհամու-
թիւնը յայտնի կ'ըլլայ:

Ս. Ղազարու Ձեռագրատան մնացած ե-
րեք ձեռագիրները՝ կարծէք՝ ուրիշ խում-
բի մը պատկանէին, այնքան նմանութիւն
ունին իրարու հետ, եւ կը զատուին նա-
խորդներէն:

4. - Չորրորդ ձեռագիրը կը կրէ թիւ
387. մեծութիւն՝ 22×15,4. լաւ միճակի
մէջ պահուած:

Ամբողջ հատորին կէսը մեկնութիւնը կը
դրաւ, նոտրագիր, եւ բաւական մաքուր.
մասնաւոր ճաշակով ընտրուած են դոյ-
ները. խորագիրները՝ բաց կարմիր, եւ
մեկնութեան սկզբնաւորութեան համար
աւելի մութ կարմիր մելան գործածուած
է:

Օրինակութեան ժամանակը յարաբերա-
բար հին է. 1679 թուականին է գրքին ա-
ռաջին մասին օրինակութիւնը. Յովհան-
նէս Արճիշեցիի մեկնութիւնն ալ կարելի
է նոյն թուականին համարիլ: Յայտնի է
օրինակողին անունը՝ Սարգիս եպիսկո-
պոս Եւդոկիացի, որուն կենսագրութիւնը
կը կարդանք վերջին էջերուն վրայ, գու-
ցէ չ. Մ. Աւգերեանի կողմէ շարադր-
ուած, ի շատ հետաքրքրական մանրա-
մասնութիւններով:

Առ ի հետաքրքրութիւն՝ կը ներկայա-
ցընենք այդ կտորը.

«Սա ըստ վկայելոյ իւրոյ՝ օրինակեալ
է զայս մատեան յերուսաղէմ ի թուին
հայոց ՌՃԻԸ այն է յամի տեառն 1679.
եւ թէ ի ժամանակին յայնմիկ էր եպիս-
կոպոս, յայտ է յամենայն բանից իւրոց,
եւ թէ թշնամութեամբ էր ընդ քաղկեդո-

նականս՝ յայտ առնէ այնու, զոր գրէ յե-
րեսս 273: Արդ՝ որպէս յայտնի երեւի ի
պատմութենէ Երեմեայ Չէլէպոյն, սա
ինքն է Սարգիս վարդապետ Թօխաթցի՝
որ յամի իրը 1684 ՌՃԼԳ, հիմն էարկ
երկպառակութեան ի Կոստանդնուպոլիս՝
զոմանս յազգէն հայ կոչելով, եւ զոմանս
կաթողիկ: Եւ թէպէտ չէ յայտ՝ թէ ինքն
յայնժամ յինչ միտոս էր, բայց յետ սակա-
ւուց էանց ի կողմն կաթողիկ կոչեցելոց,
եւ ըստ պատմելոյ Տիրացու Մաղաքիայի
կամ Երանելոյն Տեառն Կոմիտասայ ի
պատմութեան հայածանաց նաեւ սա ինքն
Սարգիս եպիսկոպոս Թօխաթցի ըմբռնե-
ցաւ վասն ուղղափառութեան, եւ վտան-
գեալ՝ անկաւ ի հաւատոց յամին 1714
ՌՃԿԳ: Եւ ահա յայնց ժամանակաց հետէ
այս դիրք ձեռագիր նորա մնացեալ ի Կոս-
տանդնուպոլիս առ ոմանս յազգայնոց՝
զուցէ ի հին տան Չոպանեանց, յետ ժա-
մանակաց ի նոցունց տուաւ մեզ յիշա-
տակ՝ ըստ գրեցելոցդ ի հանդիպոյ: Եւ
այսու պատճառաւ խուզարկեալ մեր տե-
ղեկութիւն ի ծերունեաց՝ թէ զի՞ արդեօք
եղեալ իցէ ի վախճանի Սարգիսն այն Եւ-
դոկացի, ընկալաք զայս հաւատով տեղե-
կութիւն ի ծերունի եղբայր Նիկողայոսէն
մերմէ Պուրսացւոյ, քանզի ասաց թէ
մինչ չեւ կրօնաւորեալ իմ՝ յորժամ զնա-
ցեալ էի յուխտ ի Հոովմ յամի Տեառն իրը
1731 այն է թիւ հայոց ՌՃՁ (մինչ չեւ
եկեալ էր անդր Տէր Յովհաննէս Թովմա-
ճան ի մանկութեան ընդ հօր իւրում),
վախճանեցաւ անդ ի Հոովմ քաղաքի,
Սարգիս եպիսկոպոս Թօխաթցի՝ ի կեն-
դանութեան Վրթանէս եպիսկոպոսի եւ
Սուքիաս եպիսկոպոսի, որք բնակէին ի
Հոովմ: Եւ էր այս Սարգիս եպիսկոպոս
այր ծեր յոյժ, մինչեւ անկանիլ մերթ
ընդ մերթ յերկիր ընդ կրունին, եւ ոչ
կարէր յառնել՝ մինչեւ կարդայր զայլս,
որք զային կանգնէին զնա. բայց ցորչալի
յոտին կայր՝ ժիր էր ողւով աջողաճեռն
ի գործ. եւ զի գիտէր զարուեստ սահէթ-
ճիութեան (յորմէ եւ Սահաթճի կոչուր),

յարդարէր զմեծ ժամացոյց տեղւոյն ուր կայր (այսինքն ի Սուրբ Մարիամ Եղիպտացին), եւ միանգամայն ժամ ասէր կամ աղօթս ունէր ի բերանի եւ ի նոյն աւուրս, այսինքն յամին 1731 կամ 1732 վախճանեցաւ բարի մահուամբ: Այլ էր սա (ասէ պատմող բանիցս) յառաջմէն անկեալ ի հաւատոց ի Կոստանդնուպօլիս եւ յայլազգութիւն դարձեալ, մինչեւ կապել զնա այլազգեաց ընդ աշխարհի՝ տալով նմա զկին եւ պատուելով իրրեւ մօլլա, զի մի ելցէ ի ձեռաց նոցա: Եւ մինչդեռ նա յայսպիսի աւաղելի վիճակ կայր զժամանակ ինչ, փոքրաւոր մի նորա կամ աշակերտ՝ որ եւ ինքն էր Թօխաթցի, ստէպ խօսէր ընդ նմա ի ծածուկ՝ յուշ առնելով նմա զկորուստ հոգւոյն. հայեաց յանձն քո, ասէ զի՞նչ էիր եւ զի՞նչ եղեր. եւ վախճան քո ո՞րպէս. զի՞ արասցես զհոգի քո. եւն: Եւ նա հառաչանօք եւ թառանջանօք թախճաղին տայր պատասխանին, թէ զի՞ զործեցից, ահա անկալ ի խորխորատ, եւ ոչ կարեմ ելանել. եւն: Իսկ փոքրաւորն ասէ. անսա ինձ, եւ յանձն լեր ինձ զըլխովին. եւ ես Աստուծով ապրեցողից զքեզ: Եւ ի յանձն առնուլ նորա յօժարութեամբ՝ հոգացաւ փոքրաւորն զգոլջութեամբ զամենայն պէտս հնարից. եւ զըտեալ նաւ մի պատրաստական՝ որ ունէր զնալ յարեւմուտն, յաւուր միում զիշերայն զաղտ կոչեաց զնա ի տանէ եւ մուծեալ ի նաւ՝ փախոյց յԵւրոպիա, եւ առեալ տարաւ ի Հոռոմ. ուր եւ կացեալ ժամանակ ինչ յապաշխարութեան՝ վախճանեցաւ ըստ նախազրեցելոցդ: Այլ յառաջ քան զնա վախճանեալ էր արդիւնաւոր փոքրաւոր նորա. վասն որոյ եւ ոչ տեսի զնա՝ ասէ պատմողն. որպէս եւ յառաջ վախճանեալ էր Սարը վարդապետն (այսինքն Մատթէոս Կաթողիկոս Սսոյ, որ զնոյնպիսի անց կրեաց, եւ մեռաւ ի Հոռոմ): Պատմող բանիցս եկաց ի Հոռոմ իրրեւ զտարի մի ժամանակ ի միջոցի ամի տեառն 1731 եւ 1732 »:

Իսկ ձեռագրին վերջաւորութեան՝ ինք

Սարըլիս Եպիսկոպոս կը գրէ. «Փառք քեզ Աստուած, որ քոյին կարողութեամբ զիրքս այս որ կոչի աղօթից մեկնիչ եւ քարոզի մեկնիչ, ի սուրբ մայրաքաղաքս Երուսաղէմ, ի դուռն Սուրբ Յակոբայ, ձեռամբ Եւզոկացի Սարըլիս վերաճայնութեամբ Եպիսկոպոս կոչեցեալ եւ զործով դատարկ եւ ունայն, ի լաւ եւ ընտիր օրինակէ, ի վաշխելումն անձին իմոյ. եւ յետ իմոյ վախճանին՝ ում եւ պատահեցի, կարգալով կամ օրինակելով, խնդրեցէք ի Տեառն զթողութիւն յանցանաց իմոց եւ զձերն թողցէ փրկիչն մեր, յորժամ դայցէ փառք Չօր եւ ամենայն հրեշտակօք սրբովք: Արդ եղև զբաւ սորին թվին ՌՃԻԸ (1679) յունիսի Ին »:

1790ին զիրքը պատկանած էր Միքայէլ Զոպանեանի (կամ Հովիւեանի) եւ նա նուիրած է Հ. Ղուկաս Վ. Ինճիճեանի, որ 1790ին վանք բերած է:

Ս նշանագիր պիտի կրէ այս օրինակը: Յովհաննէս Արճիշեցիի մեկնութենէն զատ կը բովանդակէ Խոսրով Անճեւացիին ժամագրքին Մեկնութիւնը, յետոյ Յովհաննէս Գառնեցիի խրատները, հուսկ Դիոնիսիոսի «Յաղագս եկեղեցական կարգաց» հատուածը:

Արճիշեցիին յառաջարկէն ետք՝ Սարըլիս Եպիսկոպոս կը գրէ. « Յովհաննէս Արճիշեցոյ էր բանքս այս, զոր Խոսրովու ասացեալ կարճատուրք պարզեալ էր. եւ մեք զներսէսին եղաք, առանց ձանձրանալոյ, մինչ ի Տէր Աստուած զօրութեանց, եւ անտի սկսեալ զԽոսրովու ասացեալն՝ առանց պարզելոյ զբանն, եւ զներսէսին ի միասին բազում քննութեամբ եւ աշխատութեամբ. եւ թէ բան ինչ պատշաճաւոր է Յովհաննէս Արճիշեցոյն՝ զայն եւս ըստ իւրում կարգի եղաք... »:

Այս յայտարարութիւնը չատ կարեւոր է մեր ուսումնասիրութեան համար, որով նպատակն է Արճիշեցիին պատկանած մասերը միայն վերահանել եւ քննել:

5. - Զեռագիր թիւ 389, չատ յար եւ

նման նախորդին. ծաւալով չատ քիչ կը տարրերի (21×17,4), բայց բովանդակութեամբ զրեթէ ոչինչ տարբերութիւն ունի: Գիրերուն ձեւն ալ նոյն է՝ նօտրազիր. միայն թէ չունի նախորդին պէս մեկնանքու զոյներու զանազանութիւնը: Ժամանակով աւելի ուշ է՝ 1713ին, օրինակուած Գաղատիա, Մովսէս կամ Յարութիւն անունով մէկու մը կողմէ:

Անորոշութիւնը անկէ է՝ որ վերջին աղօթքներէն մէկուն մէջ, օրինակողը իր անունը - Մովսէս - դրած է այնտեղ՝ ուր Սարըլիս Եպիսկոպոսն ալ իր անունը դրած է: Բայց ասոր հակառակ՝ Յարութիւն առնունքն կը հանդիպինք, թէ եւ տարբեր զիրերով, ժամանակով աւելի ուշ, բուն յիշատակարանին մէջ. հոն զբռնած է այսպէս. «Գրեցաւ տառս ի թուականութեան հայոց ՌՃԻԻ ամին. ձեռամբ Յարութիւն, ընդ հովանեաւ սուրբ Նշան եկեղեցւոյ որ ի Գաղատիա... »:

Այս ձեռագրին Գ նշանագիրը յատկացուցինք՝ Գաղատիոյ մէջ օրինակուած ըլլալուն համար:

6. - Վերջին մեր ձեռագիրը, թիւ 373, ունի մեծութիւն 21×15: Հաւասարապէս նօտրազիր է. աւելի խնամքով եղած է օրինակութիւնը եւ նուազ զարդարուն: Լուսանցքներու եղերքին՝ կարմիր գիծեր կան: Գրութեան ժամանակը անորոշ է, ինչպէս նաեւ տեղը. յայտնի է ստացողին եւ կազմողին անունը, եւ կը կարգանք վերջին էջին վրայ. «Յարութիւն զպիրս առի զսա թվին ՌՃՂԱ. = 1742ին»:

Արճիշեցիի Մեկնութենէն զատ կը պարունակէ Ս. Օգոստինոսի «Խրատ անհրմտից խոստովանահարց», լրացուած այլ եւ այլ խրատներով, նման Ս. Օգոստինոսի խրատներուն:

Ի յիշատակ Յարութիւն զպիրն՝ Յ զըլխազրով նշանակեցի այս ձեռագիրը:

Գծուարին է այս ձեռագիրներու արմէքի մասին վճիռ տալ: Նախ ասոնք ամէն ալ գրուած, օրինակուած են Արճիշեցիէն 300 տարի յետոյ, ուստի հեռու

կը մնան հարազատ օրինակը ներկայացընելէ: Նոյնիսկ անբաւարար է ըսել որ այս ինչ ձեռագիրը լաւագոյն օրինակի մը վրայէն օրինակուած ըլլալով, թէ եւ ժամանակով աւելի ուշ է, առաջնութիւն ունի: Այսպիսի քննութիւններ կատարելու համար տակաւին կը պակսին չատ մը ձեռագիրներ:



Մեր ունեցած վեց ձեռագիրները առ ի փորձ բաղդատելով իրարու հետ, մեզի կը թուին, առաջին ակնարկով, որ անոնք երկու որոշ խումբերու կը բաժնուին, նրկատած յառաջարանին սկզբնաւորութեան տողերը, անտեսելով մեկնութեան վերջնագիրները: Առաջին իսկ պարբերութենէն կարելի է հետեւցնել թէ Կ Վ Լ ձեռագիրները մէկ խումբի, Ս Գ Յ ձեռագիրները՝ ուրիշ խումբի կը պատկանին:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Ա. Զեռագիրներուն խորագիրները

Կ Իմաստնոյն Յովհաննիսի Վարդապետի մականուն տկար կոչեցեալ Եղիշացոյ: Համառօտեալ մեկնութիւն Ներսէսի Լամբրոնացւոյ Արքեպիսկոպոսի: Յաղագս մեկնութեան ս. պատարագի Աթանասի Աղեքսան:

Վ Մեկնութիւն պատարագի զոր արարեալ է Ներսէս Լամբրոնացին եւ համառօտած Յովհաննէս վարդապետ Արճիշեցին: Վասն ուսումնասիրաց յաղագս ամենայնի:

Լ Տեառն Ներսէսի ասացեալ որ Յովհաննէս պրուզն Արճիշեցի վարդապետն համառօտեաց մեկնութիւն խորհուրդ ս. պատարագին:

Բ. Զեռագիրներուն սկիզբի պարբերութիւնը

Կ Ամենայնի ժամանակ է եւ ժամանակ է ամենայն իրի, ժամանակ է լալոյ եւ ժամանակ է ծիծաղելոյ. ժամանակ է զուգելոյ եւ ժամանակ է քակելոյ: Եւ որպէս ասէ մարգարէն. Վասն այսօրիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք. ընդ որս եւ ամենայն հաւատացեալք սիրով եւ միաբանութեամբ կատարեն զկարգ եկեղեցւոյ եւ զհրամանս Քրիստոսի: Արդ զի հարքն մեր առա-

Ջինքն եւ վարդապետն եկեղեցւոյ, յարժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք եւ խորին եւ ծածուկ բանիւք ըստ այնմ թէ ժողովեաց որպէս ի տիկ. այլ զեղազարդ եւ պաճուճեալ բառիւք հնարէին ցանկալի առնել ուսումնասիրացն:

Վ (Ժ)ամանակ է ամենայն իրաց, ասէ Սողոմոն. Ժամանակ է լալոյ եւ Ժամանակ ծիծաղելոյ, Ժամանակ շինելոյ եւ Ժամանակ քակելոյ. որպէս եւ Դաւիթ ասէ. Վասն այսորիկ յաղօթն կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի Ժամ ընդունելի. ընդ որս եւ ամենայն քրիստոնեայ հաւատացեալք սիրով եւ միաբանութեամբ կատարեն զկարգ եկեղեցւոյ եւ զհրաման Քրիստոսի: Զի հարքն մեր առաջինքն եւ վարդապետք յորժամ բանս ինչ խօսէին յաստուածայնոցն զորոց եւ կամ զրէին նուրբ եւ առակաւոր դարձուածովք եւ խորին եւ ծածուկ բանիւք, ըստ այնմ թէ ժողովեաց որպէս տիկ զՋուրս ծովու եւ զնէ ի խորս զգանձ իւր: Եւ զեղազարդեալ պաճուճէին բանիւք եւ բառիւք եւ հնարէին ցանկալի լինել ուսումնասիրացն:

Լ Գրէ աստուածայինն Սողոմոն. Ժամ եւ Ժամանակ է ամենայն իրի. Զի հարքն մեր առաջինքն քահանայապետք եկեղեցւոյ, զամենայն ինչ աստուածայնոց պատգամացն զոր ասել կամէին եւ կամ զրել առակս. որ դարձուածովք յաւրինէին եւ զեղազարդ, պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել զբանս սիրողացն:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲԻ ԶԵՈՒԱԳԻՐՆԵՐԸ

Ա. Զեռագիրներուն խորագիրները

- Ս Տեսութիւն սուրբ պատարագին Յոհաննու Արճիւնցոյ:
- Գ Տեսութիւն սուրբ պատարագին Յոհաննու Արճիւնցոյ:
- Յ Տեսութիւն սուրբ պատարագին Յոհաննու Արճիւնցոյ, ըստ ասիւոյն Սողոմոնի:

Բ. Զեռագիրներուն սկիզբի պարբերութիւնը

Ս Գ Ամենայնի Ժամանակ է եւ Ժամանակ է ամենայն իրի: Արդ վասն զի հայրն մեր առաջինքն եւ վարդապետք եկեղեցւոյ յորժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք այլ եւ զեղեցկազարդ եւ պաճուճեալ բառիւք հնարէին ցանկալի առնել լսողացն:

Յ Ամենայնի Ժամ է եւ Ժամանակ ամենայն իրի: Վասն զի հարքն մեր առաջինքն եւ վարդապետք եկեղեցւոյ, յորժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին եւ կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք այլ եւ զեղազարդ եւ պաճուճեալ բառիւք հնարէին ցանկալի առնել լսողացն:

նոց պատգամացն խօսել կամէին, եւ կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք. այլ եւ զեղեցկազարդ եւ պաճուճեալ բառիւք հնարէին. ցանկալի առնել լսողացն:

Բայց շարունակելով ըստ պատգամի Յոհաննու մնացած պարբերութիւնները, այս երկու խումբերու պատկանելի երեւցած ձեռագիրները կը բաժնուին իւրաքանչիւր եւ զԺուարին կ'ըլլայ որոշ եւ վերջնական եղբայրացութեան դալ:

Լրացնելու համար մեր ծանօթութիւնները, առաջ բերենք նաեւ Վիեննայի (Ս. Նշանադրով) եւ Հայկալի (Հ. Նշանադրով) ձեռագիրներու հատուածները, որոնք լոյս տեսած են հրատարակուած ձեռագրաց ցուցակներուն մէջ:

Ա. Զեռագիրներուն խորագիրները

Ա Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ պատարագին, արտահանեալ ի մեկնութեանց Խորհրդու Անձեւացեաց Եպիսկոպոսի եւ Ներսիսի Լամբրոնացւոյ վերատեսչի Տարսնի, կարճելով եւ պարզաբանելով ի Յոհաննու Արճիւնցոյ:

Հ Կը պակսի խորագրի մասը:

Բ. Զեռագիրներուն սկիզբի պարբերութիւնը

Ա Ամենայնի Ժամանակ է եւ Ժամանակ է ամենայն իրի: Արդ վասն զի հարքն մեր առաջինքն եւ վարդապետք եկեղեցւոյ, յորժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին եւ կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք, այլ եւ զեղազարդ եւ պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել աստուածասիրացն:

Հ Ժամ եւ Ժամանակ է ամենայն իրի. Արդ վասն զի հարքն մեր առաջինքն եւ վարդապետք եկեղեցւոյ, յորժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին եւ կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք, այլ եւ զեղազարդ եւ պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել լսելս այս իրացն



Այստեղ աւարտելով մեր ուսումնասիրութեան ներածական մասը, պատշաճ կը նկատենք հրատարակել Կալկաթայի 1830 թ. տպագրին յառաջաբանը, համեմատելով Ս. Ղազարու վեց ձեռագիրներուն, ինչպէս Վիեննայի եւ Հայկալի վերոյիշեալ օրինակներուն հետ:

Խրատ սրբոյ խորհրդոյս. Արարեալ Ովհաննիսի Վարդապետի Արնիշեցոյ՝ որ կոչի Ոսպնակեր, առ քահանայս աստուածագործս:

Ամենայնի Ժամանակ է, եւ Ժամանակ է ամենայն իրի: Արդ վասն զի հարքն մեր առաջինքն եւ վարդապետք եկեղեցւոյ յորժամ բանս ինչ յաստուածայնոցն պատգամացն խօսել կամէին, եւ կամ զրել, նուրբ եւ առակաւոր դարձուածովք՝ այլ եւ զեղազարդ եւ պաճուճեալ բառիւք հնարէին ցանկալի առնել լսողացն: Եւ զայս՝ ոչ թէ՛ վայրապար ինչ. եւ կամ թէ՛ վասն փառս որսալոյ ի

մարդկանէ՝ այսպէս առնէին. այլ զի տեսանէին զմարդիկ Ժամանակին այնորիկ՝ ցանկացողք ուսմանց բանից եւ սիրողք աշխատութեանց. եւ զի մի՛ զիւրազրեալ լինելոյ վասն՝ զիւրաւ արհամարհեալ լիցին իմաստք նոցա, վասն այսորիկ այնպիսի օրինակաւ զրէին, եւ կամ թէ՛ խօսէին ընդ նոսա: Բայց տեսանեմք զսոսա՝ որք ի մերումս են Ժամանակի, զի ոչ ունին զնոյն փոյթ յանձինս իւրեանց. այլ՝ կամ իսկ ոչ առնեն փոյթ զորոց ընթերցուածոց. եւ կամ թէ՛, ընթերցուն եւ ոչ բնաւ քննեն զմիտս զրելոցն: Այլ է զորս ի զիրս

- 1 + Գրէ աստուածայինն Սողոմոն Ժամ եւ Ժամանակ է Լ: + [Ժ]ամանակ է ամենայն իրաց, ասէ Սողոմոն, Ժամանակ է լալոյ եւ Ժամանակ ծիծաղելոյ, Ժամանակ շինելոյ եւ Ժամանակ քակելոյ. որպէս եւ Դաւիթ ասէ. Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի Ժամ ընդունելի. ընդ որս եւ ամենայն քրիստոնեայ հաւատացեալք սիրով եւ միաբանութեամբ կատարեն զկարգ եկեղեցւոյ եւ զհրաման Քրիստոսի Վ: > է ԼՀ:
- 2 + Լրի: Ժամանակ է լալոյ եւ Ժամանակ է ամենայն իրի: Արդ վասն զի հարքն մեր առաջինքն քահանայապետք եկեղեցւոյ, զամենայն ինչ աստուածայնոց պատգամացն զոր ասել կամէին եւ կամ զրել առակս. որ դարձուածովք յաւրինէին եւ զեղազարդ, պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել զբանս սիրողացն:
- 2 > Արդ ՎՅԼ: Վասն զի զի ԿՎԼ:
- 3 հարք ԱԿՎՅԼ: հայր ՍԳ: առաջինքն ԿՎՅՅ: վարդապետք ԱԼՅՍԳ: վարդապետքն] քահանայապետք Լ:
- 4 > Եկեղեցւոյ Վ: > յորժամ Լ: բանս ինչ] զամենայն ինչ Վ:
- 5 ~ Խօսէին յաստուածայնոցն զորոց Վ: յաստուածայնոց ԼԳՅ: աստուածայնոցն Վ: պատգամացն ԿԼՍԳՅ: պատգամաց] զորոց Վ: խօսել ԿՎՍԳՅԱՀ:
- 5-6 ~ կամէին խօսել Վ: խօսել] զոր ասել Լ: > կամէին Լ: > եւ ԿՍԳ: զրել] զրէին Վ: առակս որ դարձուածովք Լ: դարձուածովքն Գ: դարձուածովք Զ: > այլ ՎՀ: + դարձուածովք խորին եւ ծածուկ բանիւք ըստ այնմ թէ ժողովեաց որպէս տիկ ԿՎ: + տիկ զՋուրս ծովու զնէ ի խորս զգանձ իւր Վ:
- 7-8 զեղազարդ ԿԼԱՀ: զեղազարդեալ Վ: զեղեցկազարդ ՍԳՅ:
- 8 > եւ Լ: բանիւք ԼՀԱ: + բանիւք եւ բառիւք Վ:
- 9 Լսողացն] ուսումնասիրացն Կ: ուսումնասիրացն Վ: զբանս սիրողացն Լ: աստուածասիրացն Ա: լսողացն ՍԳ: լսելս այս իրացն Հ: + լսողացն: Որպէս զինչ աշխարհիս. զի

զարդաբեմ ազգի ազգի գունովք զի ցանկալի լինիցի տեսողացն Կ: + լսողացն: Որպէս զինչ աշխարհիս, զի զարդաբեմ ազգի ազգի գունով՝ որ ցանկալի լինիցի տեսողացն. այնպէս եւ սուրբ հարքն մեր առաջինքն քահանայապետք եկեղեցւոյ, զամենայն ինչ աստուածայնոց պատգամացն զոր ասել կամէին եւ կամ զրել առակս. որ դարձուածովք յաւրինէին եւ զեղազարդ, պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել զբանս սիրողացն:

10 > Թէ ԿԼ: Եթէ ՎՍԳՅ:

10-20] Ոչ եթէ վասն փառասիրութեան զի զփեսայն ի մարդկանէ: Այլ վասն այնորիկ զի ամենայն մարդոյ հաճոյ լինի, եւ զի սիրեցեն զուսումն: Զի առաջին Ժամանակին ամենայն մարդ սիրէր զուսումն իսկ ի մերում Ժամանակիս ոչ զայն սէր զփոյթ Վ:

11 փառս որսալոյ] փառասիրութեան Վ:] փառագործելոյ Լ:

12-14 այնպէս առնէին... այնորիկ Լ: այնորիկ] այն իսկ ՍԳ: յայնմիկ Յ:

15 + աշխատութեանց: Այնպէս եւ սուրբ հարքն մեր առաջինքն զարդաբեմ քահանայապետք եկեղեցւոյ, զամենայն ինչ աստուածայնոց պատգամացն զոր ասել կամէին եւ կամ զրել առակս. որ դարձուածովք յաւրինէին եւ զեղազարդ, պաճուճեալ բանիւք հնարէին ցանկալի առնել զբանս սիրողացն:

17 լինիցի ՎԼՍԳՅՀ:

19 > Թէ ԼՍԳ:

20 զսոսա] զոմանս Լ:

21 որ ԿՍԳ: ի մերումս են] յայնմ Լ: ի մերումս Ժամանակիս Յ: > զի Յ:

22 ունէին Կ: ունին + գտնին եւ գիտնին Յ: + գտն յանձինս Կ: > յանձինս իւրեանց Յ:

22-24 > զի ոչ ունին եւ զնոյն փոյթ յանձինս իւրեանց. այլ՝ կամ Լ:

24 + Ընդ զորոց Կ: եւ կամ] եւ կամ ոմանք որ կարգան Վ: եւ կամ...] եւ ոչ կամաւք են զմիտս զրելոցն Լ:

25 Թէ] իսկ Կ:

26 + զրելոցն եւ ոչ տնին առ ոսոս վարդապետաց երկրասիրաբար աշխատութեամբ: Զոր Տէրն (Տէր Վ) հրամայեաց թէ քննեցէ գիրս ԿՎ:

26 է] եւ ոմանք Կ: զոր] զորս ԿԼ:

26-27 > Այլ... իմանան ՎՅ:

ընթերցողն էլ ոչ իմանան. եւ է զոր
 ի բերան առեալ՝ ասեն հանապազ եւ
 ոչ գիտեն եւ ոչ հասկանան. որպէս
 30 զսաղմոսն Դաւթի եւ զսոյն խակ զա-
 ղօթս խորհրդոյ պատարագիս: Զոր
 ոմանք կատարողք սոյն խորհրդոյ
 քահանայքն՝ ի բերան առեալ ասեն
 զաղօթս եւ ոչ իմանան. գործեն եւ
 35 ոչ գիտեն. այլ միայն արագ եւ շու-
 տափոյթ լեզուօք չաղակրատեն զրա-
 նրա աստուածային աղօթիցս. եւ ոչ
 գիտեն բնաւ թէ, զի՞նչ իցէ զոր խօ-
 սին եւ կամ գործեն. բայց միայն ա-
 40 ւարտմանն սպասեն. եւ ոչ իմաստից
 զիրութեան աստուածային խորհրդ-

- 27-29 եւ է... հասկանան] եւ կան ոմանք որ ի
 բերան առեալ ասեն եւ ոչ իմանան Վ:
 28 + առեալ եմ եւ ասեն Յ:
 29 ոչ գիտեն եւ ոչ հասկանան Կ:
 30 ~ Դաւթի սաղմոսն Յ: զսոյն Կ: զսոյն
 խակ] կամ Յ:
 31 խորհրդոյ] սրբոյ Կ: > խորհրդոյ Վ: պա-
 տարագի Վ: պատարագի ՍԳ: ~ պատա-
 րագին խորհրդոյ Ն: Զոր] Զի Կ: > Զոր
 Վ: + Զոր եւ Յ:
 32 > ոմանք ԿՎԹՀ, 1717 տպ.: > կատարողք
 Վ: սոյն] սրբոյ ՍԳ: > սոյն Վ: սոյն]
 այն Ն: խորհրդոյ] խորհրդոյն ՍԳ: խորհրդ-
 րոյ] պատարագին Յ: > խորհրդոյ Վ:
 33 քահանայք ԿՎԹՀ: > ասեն Վ: Յ:
 33-34 ~ զաղօթս ասեն Լ:
 34 ոչ իմանան] ոչ գիտեն թէ գինչ Յ: > զոր-
 ծեն Վ:
 34-35 եւ ոչ գիտեն] կամ խօսին Յ:
 35 գիտեն] գիտենան: + գիտեն քէ գինչ է Կ:
 35-37 > այլ... աղօթից Վ: > այլ ՍԳՀ: ~
 ոչ գիտեն թէ զով կարգան կամ գինչ է Վ:
 35 շտափոյթ ԿՎ:
 36 լեզուօք Լ: չաղակրեն Վ:
 36-40 չաղակրեն եւ միայն զաւարտն խնդրեն. եւ
 ասեն ջանացաւ շոյտ լինի. եւ ոչ գիտեն
 ով կարգան կամ թէ ով չաղակրեն. եւ զով տե-
 անեն. կայ զով պատարագին Վ:
 37 աղօթից ԿՀ: աղաթիցն Լ:
 37-40 > եւ... սպասեն Յ:] աղօթից պատարա-
 գին եւ ասեն ջանացաւ շոյտ լինի. եւ
 [ոչ] գիտեն զով կարգան եւ կամ զով չաղա-
 փեն. կամ զով տեանեն եւ կամ գինչ գործեն
 եւ պատարագեն. եւ բնաւ ոչ իմանան թէ գինչ
 է որ խօսին եւ կամ գործեն միայն աւարտ-
 մանն սպասեն եւ ոչ... Կ:
 37-38 ~ եւ բնաւ ոչ իմանան Կ:
 38 իցէ] է ԿԼ: զոր] որ ԿՍԳՀ: + խօսինն եւ
 ԿՀ: + եւ գործեն 1717 տպ.:
 39 կամ] եւ ՍԳ: > բայց ԿԼՍԳ:
 40-44] եւ ոչ իմանան զաւարտին աստուածային
 խորհրդան. սպասողք եւ կատարիչ եւ գոր-
 ծօնեա աստուածային խորհրդոյն իցէ Ն:
 44 > ձեռակերտ Վ: ձեռագործ Լ: ձեռագէտ Ն:

դեանն: Ո՞վ այլ կատարիչ եւ գոր-
 ծօնեա աստուածային խորհրդոյ.
 իցէ թէ ոք ի ձեռակերտ արհեստա-
 45 ւորաց՝ եթէ հիւսն իցէ, կամ դար-
 բին, եւ կամ ոստայնանկ. յորժամ
 կամիցի անօթս ինչ առնել. եւ ոչ
 նախ խորհիցի եւ ոչ զմտաւ ածիցէ
 զձեւ եւ զօրինակ անօթոյն. այլ մի-
 50 այն առանց խորհրդոյ զձեռն միայն
 ի գործն շարժիցէ՝ հնա՞ր է լինիլ ի
 նմանէ անօթ ինչ պիտանացու. եւ
 եթէ այս անհնար է, որքան ապա
 պարտ է մտաւոր խորհրդով եւ
 55 մանաւանդ թէ, հանդերձ մեծաւ եր-
 երկիւղիւ եւ զգուշութեամբ ձեռն

- 44-46] արհեստաւոր ինչ կամ որ զոստայնա գոր-
 ծեն Վ:
 45 եթէ] է թէ հիւս ՍԳ: ~ եթէ իցէ ոք ի ձե-
 րակերտ Կ: դարբին Լ:
 46 > եւ Կ: ոստայնանկ Կ: ոստայն(յ)անկ Ն: ոս-
 տայնանկ] եւ որ զոստայնա գործեն + եւ
 կամիցին... Կ: յորժամ] եւ ԿԼ:
 46-47 > յորժամ կամիցի անօթս Ն:
 47 կամիցին Կ: անաթ Լ:
 47-49 ~ եւ կամ որ անօթ ինչ առնեն. եւ ոչ նախ
 խորհին եւ զմտաւ ածեն. թէ որպէս մարթի
 ձեռն ի գործ արկանել եւ կատարել Վ:
 48 + եւ կամ ոչ զմտաւ Ն: մտաւ Լ:
 50 զձեռս ԿՀ: զձեռն Լ: + զձեռն եւ զոստայն: Ն:
 51 ի գործ Լ: + շարժիցէ ի գործ արկանել եւ
 կատարել Կ: հնար] անհնար ԿԼ:
 51-52 > ի նմանէ Յ:] անհնար է գործոյ անօ-
 թին պիտանացու լինել Վ:
 52 > անօթ Կ: + պիտանացու. եւ ամենայն ար-
 ուեստաւորք յառաջ մտօք տեսանեն եւ ձեռա-
 ցուցանեն եւ ապա գործեն: Իսկ քէ ի գործս
 մարդկայինս այսպէս պարտ է լինել որ-
 քան... Կ + պիտանացու լինել. եւ ամենայն
 արուեստաւորք յառաջ մտօք տեսանեն եւ ձե-
 րացուցանեն եւ ապա գործեն: եւ քէ ի գոր-
 ծս մարդկայինս այսպէս պարտ է լինել. ապա
 ո՞րչափ... Վ:
 52-53 > եւ թէ... է Կ:
 53 թէ ԼՍԳ: այս] այսմ Յ: անհնարին ՍԳ: >
 ապա ԿԼՍԳՀ: մտաւոր] մարդք Յ: մտաւոր
] զգաստ լինել Վ:
 53-58 + առ. որչափ պարտ է զգաստ լինել որ
 յաստուածային գործ ձեռք արկանել եւ զԱռ-
 տուած պատարագին եւ աստուածագործութիւն
 առնեն: Քանզի ապա պարտ է երկիւղիւ եւ
 զգուշութեամբ կեալ եւ ձեռն արկանել յայս
 մեծ գործ եւ աստուածային խորհուրդս Վ:
 + որքան պարտ է մաքուր խորհրդով իմա-
 նալ եւ բնեւ զայն որ աստուածային է. Տէր
 ասէ բնեցէ՛ք զգիրս. պարտ է մեծաւ երկիւ-
 ղի զգուշութեամբ բնել ի ձեռն արկանել
 այս մեծ եւ սարսափելի խորհուրդս Յ:
 54 խորհրդաւ Լ: խորհրդոյն ՍԳ:
 56 զգուշութեամբ] զգուշութեամբ Ն:

արկանել ի գործս յայս՝ մեծ եւ սար-
 սափելի խորհրդոյս. քանզի աստ-
 ուածագործութիւն է, եւ ոչ թէ
 60 զոյգն ինչ գործ: Վասն որոյ մեծն
 Խոսրով՝ Հայրն Գրիգորի Նարեկա-
 ցոյն նախ՝ եւ Ներսէս վերադասուին
 Տարսնի յետոյ, ընդարձակ եւ պայ-
 ծառ քննութեամբ ետուն մեզ զմեկ-
 65 նութիւն պատարագիս: Բայց են ո-
 մանք՝ զի զյաճախութիւն բանիցն
 պատճառեն եւ կէսք զնրբութիւնն,
 եւ անօղուտ մնան. թէպէտ եւ չէ ինչ
 ծածուկ բանք նոյնին: Յաղագս այսո-
 70 րիկ յետեալս ի բարեաց՝ ծնունդս
 վերջին ժամանակիս՝ Ովհանէս Ար-

- 57 գործսն Կ: > յայս Կ:] այս ԼՍԳ (Յ) 1717
 տպ.:
 58 քանզի] զի Վ: Վասն՝ ԿԼ:
 59-60 թէ գործն] գործ ինչ Յ:
 60 գործն ինչ] մարմնաւոր գործ Վ: > գործ
 Վ: + գործ: Դարձեալ որչափ պարտ է պա-
 տարաւ լինել որ աստուածային գործն ձեռն
 արկանել. գիտցիր զինչ է վայրապար գործն.
 եւ կամ քէ զինչ բաժակս: Վասն Կ: + գործ:
 Գիտցիր զինչ է վայրապար գործ: եւ կամ թէ
 զինչ է հացս եւ բաժակս Վ: մեծն] Տէր Վ:
 Նարեկացոյն Վ: Նարեկացոյ ՍԳՅԱ:
 61 > նախ ԿՎԼ:
 62-63 վերադասուին Տարսնի] Լամբրոսային Վ:
 Ներսէս Տարսնայ Յ:
 63 Տարսնեցոյ Ն:
 63 + եւ յետոյ ՍԳ:
 64 քննութեամբ] մեկնութեամբ Լ: > ետուն
 Վ:] պատարագի մեկնութեան տեսութիւն
 Վ: (հոս կը վերջանայ օրինակը):
 64-65 + զմեկնութիւնս սուրբ Լ:
 65 պատարագին Յ (հոս կը վերջանայ օրինա-
 կը): + պատարագին տեսութեան Կ: բայց են
] այլ Ն: + բայց զի եմ ԿԼՍԳ:
 66 > զի Կ: յաճախութիւն ԿՍԳՀ: յաճախու-
 թեամբ (?) Լ:

ճիշեցի թախանձեալ յոմանց քահա-
 նայից սրբազեցից, տալ նոցա վե-
 րստին համառօտ եւ պարզ բանիւք
 75 զտեսութիւն խորհրդոյս: Եւ մեք
 հարկեալ ի նոցունց՝ ձեռն արկաք ի
 սոյն, յուսալով ի հոգին սուրբ եւ
 յաղօթս սրբոց: Ոչ թէ յաւելուած
 ինչ իմաստից խառնելով ի մէջ ի
 80 բանս մեկնութեան նախասացեալ ա-
 բանցն, այլ միայն զբանս նոցունց
 կարճեալ պարզեցաք: Որ թէ հաճելի
 իցէ ձեզ՝ տեսուն շնորհ. եւ թէ ոչ՝
 եւ նոյնպէս շնորհ տեսուն. բայց մի-
 85 աչն՝ անպարսաւ մնացից ի պատա-
 հելոցդ:

- 67 > եւ կէսք Լ: կէս Ն:
 68 անաղուտ Լ: ինչ] ինչ Ն: + ինչ յոյժ ԿԼ
 ՍԳՀ:
 69 նոցա ՍԳՀ (հոս կը վերջանան Ս եւ Գ օրի-
 նակները):
 70 ծնունդ Լ:
 71 ի ժամանակիս Ս: Յովհանէս ԿԼԱՀ: Արճի-
 շեցիս 1717 եւ 1719 տպ.:
 72 ոմանց Լ:
 74 բանիւ Ա:
 75 + զմեկնութիւնս սուրբ Լ:
 76 հարկեալք ԱՀ:
 78 Սրբոցն ԿՀ: եթէ Լ:
 79 իմաստից] բանս Լ: մէջ] մէջ Ն: > ի
 (բանս) Կ:
 80 նախ ասացեալ ԿԼ 1717 տպ:
 80-81 + արանցն զբանս Լ:
 82 կարճել Լ: կարճառօտ Ն: Զոր ԿԼԱՀ: թէ]
 եթէ ԿԼ:
 82-84 ձեզ տեսուն... բայց] ձեռու շնորհ Ն:
 83 + տեսուն շնորհ է Լ: եւ թէ] երբ 1717,
 1719 տպ.:
 83-84 (ոչ) > եւ ԿԼ:
 84 > տեսուն բայց ԿԼԱ:
 84-85 > միայն Լ:

(Նարունակելի)

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈՒՈԼԵԱՆ